



ՀԱՅ


ՍԿԱՈՒՏ

ԿԻՍՍՍԼԵՍՅՐՕՐԿԱՆ Հ.Մ. Ը. Ս.

Բ. ՏՕՐԻԹԻԻ 3 ԶՍՏԸ 5 ԴՂԿՆ. 1 ՅՈՒԻԻՍ 1921

ՀԱՅ ՍԿԱՈՒՏ
 ՀԱՅԿԻ, — Բորասանձյան Խան, թիվ 26, Սիրիայի, Կ. Պոլիս
 (Téléph. № 2146 St.) H A I S C O U T (Հեռ.ճ. 2146 ՍՔ.)
 ORGAN DES SCOUTS ARMENIEN
 ADRESSE. — Khorassandjian Han, 26, Sirkédj — CONS/PLE
 Բաժնեգին Տարիկան 120 դր.
 Արասանձյան 15 ֆր.
 Ամերիկա 1.50 ամսագր

Մարդկության պատերազմի պիտի ըզայ այն ազգը, որուն անհասները շատ
 սկաուտներէ կազմուած պիտի ըզան:
 Ոչխարի ճանչցած բարոյական ուժերուն ամենէն մեծը պիտի ըզայ այն:
ԼՈՐՏ ԲՈՋՊԵՐԸ



17 Ապրիլ Ազիւտարի Մարգ սրանի մէջ սկաուտական ընդհանուր ընտրութիւններու պահուն

ԳՐՁԻՆ ԽՕՄԻՔ


«Սկաուտը եղբայր է ամէն ուրիշ սկաուտի...»

Այո սիրելի բարեկամներս, սկաուտական թղթակցութիւններու օգուտը ձեր ենթադրածէն շատ աւելի է: Դուք այդ թղթակցութիւններով անշահախնդիր կապով մը կապուած կ'ըլլաք օտար պատանիներուն հետ որոնք՝ օր մը, իրենց հայրենիքներուն արհեստաւորները, փոճառականները, գործարանատէրերը, նախարարները, երեսփոխանները, գիտունները կրնան ըլլալ: Ապագային, երբ դուք ալ ձեր անկախ հայաստանի իբր ազատ բաղաբացի դիրք մը ունենաք, միշտ կարիք պիտի զգաք օտար երկիրներու հետ յարաբերութիւն մշակելու անուշտրական, գիտական կամ քաղաքական հոգի վրայ, այն ատեն է որ դուք պիտի բաղէք ձեր սկաուտական թղթակցութիւններու պտուղը ինպատկէ ձեզի եւ ձեր հայրենիքին, որովհետեւ մանկութեան բարեկամները չ'են մոռցուիր, անոնց յիշատակը միշտ գեղեցիկ զգացումներ կ'արթնցնեն մեր մէջ բան թէ վերջէն շահու նկատումներով ձեռք բերուած ծանօթներունը: Ոտար երկիրներու մէջ, միշտ ձեր տրամադրութեանը տակ պիտի ունենաք, վատահելի եւ պատանեկան յիշատակներով կապուած բարեկամներ: Երբ դուք օր մը այցելէք ուրիշ երկիրներ, հոն պիտի գտնէք ձեզ հիւրասիրող անկեղծ հոգիներ, որոնք ձեզի լը պիտի զգացնեն օտարութեան անպատեհութիւնները, դուք հոն, օտար երկրի մէջ, բոլորովին անծանօթ ընտանեկան բոյնի մը մէջ պիտի գտնէք, ձեր անցած ծաղիկ հասակի յիշատակներէն նշխարներ, որոնք դուք ժամանակին զրկած էք ձեր սկաուտ եղբոր, այդ փոքրիկ յիշատակներն իսկ բաւական պիտի ըլլան ձեր օտար, օրինակի համար, ձարոնցի բարեկամին ընտանիքին մէջ մտերիմ շրջանակ մը գտնելու: Փոխադարձաբար ձեր օտարագր բարեկամները պիտի այցելեն Հայաստան եւ հոն փոխանակ վարձկան առաջնորդներու, պիտի գտնեն նախկին իրենց սկաուտ եղբայրներէն բարեկամներ եւ անոնց աջակցութիւնը եւ հիւրասիրութիւնը պիտի վայելեն, անոր առջեւ բաց պիտի ըլլան ձեր հայրենիքին բոլոր պաշտօնական շէնքերը, դուք, իրենց բաց սիրտով պիտի բացատրէք ձեր երկրին առաւելութիւնները եւ թերութիւնները եւ անոնք սիրով

պիտի ուզեն աջակցիլ ձեզի՝ ուղղելու համար այդ թերութիւնները:

Հոս մէկիկ մէկիկ կարելի է թուել այն բոլոր առաւելութիւնները եւ անակնկալները որոնք ձեռք պիտի բերէք ձեր այս թղթակցական ձեռնարկէն, միայն աս որոշ է որ ասով դուք լաւագոյն առիթը պիտի ստեղծէք ձեզի օտար բարեկամներ շահելու, կեանքի մէջ ձեզի աջակցիներ նարելու, ձեր ազգը օտարներու լաւ ձեռով մը ծանօթացնելու:

Սկսէք այսօր եւ արդիւնքին վրայ մի մտածէք:



Սկաուտութեան հիմնադիր Զոր. Պետրն Բաուլի նամակը Հայ սկաուտներու մասին

ՎԵՐԻ ՆԱՄԱԿԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

ՊՈՑ ՍԿԱՈՒՏ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ
25 ՊԵՏԻՆԿԵՆՍ ԲԷՂԵՍ ԲՈՑ
ԼՈՍԱՆՍ, 8 Յունիս, 1921

Սիրելի Պ. Խորասանճեան,
Գարիթէն Թէսիկըր ձեր սկաուտներուն տուած մէկ այցելութեան մասին ինձի տեղեկագիր մը զրկած է եւ այնչափ նպաստաւոր կերպով կը գրէ որ՝ պարտաւորուած

ՃԷՄՊՕՐԻՒՆ ԱՌԹԻՒ
ԱՒԱԳ ՊԵՏՐ ԿԵ ՊԱՏՄԷ՛ ՊՕՅ-ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ
ՊՍՏՍՈՒԹԻՒՆԸ

(Շար. Թիւ 2ԷԳ)

Սկաուտութեան նպատակն է թէ մէկը թէ միւրը զարգացնել և օգնել երիտասարդներուն՝ ըլլալու կարող և երջանիկ քաղաքացիներ:

Սկաուտական ձեռնարկին էական յատկանիշը անոր ոգիին մէջ է, և Անտառային արկածախնդրական զրոյցներով և Բնութեան սիրովն է որ կարելի է այդ ոգին դրոշմել:

Ո՞ր ազան կրնայ անզգայ մնալ, նոյն իսկ նիւթապաշտ մեր դարուն մէջ, կոյս բնութեան կամ ազատ ուղիին հրաւերին: Կրնայ ըլլալ որ մեր նախնական բնազդն է որ երեւան կ'ելլէ այս առթիւ: Ի՞նչ որ ալ ըլլայ, այս բնազդը կայ ու կը մնայ, և մոզական բանալիի մը պէս լայն կը բանայ այն դուռը ուրկէ կը թափանցեն մաքուր օդը և արեւը, առանց որոնց այնքան կեանքեր արտում և միօրինակ պիտի մնային:

Բայց սկաուտական դրութիւնը ասկէ անդին ալ կ'երթայ:

Վայրի դաւսուներու դիւցազները, հետախոյզները և աշխարհադէտերը, ծովերը ասպատակողները ինչպէս նաև օգի աշխարհակալները երիտասարդներուն համար փայլուն հմայիչներ են որոնց ամէն տեղ հետեւելու պատրաստ են: Ու կայտառ դուարթ պիտի երթան անոնց ետեւէն բաւական է որ աննականութեան և յանդգնութեան, արկածախնդրութեան և ճիշդ կարողութեան և ճարպիկութեան, ուրիշներու համար ուրախ անձնագոյնութեան երգը երգեն իրենց: Այս աւէնը տղու մը հոգիին ալ մարմինին ալ սնունդ կը ջամբէ:

Տեսէ՛ք սա լաճը որ փողոցն ի վար կ'իջնէ՛ իր աչքերը հեռուն կը գիտեն. մարգագետինը, ծովը կը տեսնէ հոն: Ամէն պարագայի մէջ ուշադրութիւնը ուրիշ տեղ է. ապահովաբար կրօնամ ըսել ձեզ ասիկա:

Սկաուտութեան շնորհիւ, տղան, սկաուտի տարազին տակ, Անտառաբնակ Մարդոց մեծ նըրայրակցութեան անդամի մը կը փոխուի: Կը սորվի հեռքի մը հետեւի և նշանները ճանչնալ, նշաններով խօսիլ, կրակ վառել, ասպատանարանը շինել և կերակուր եփել: Իր տասը մասներովը գիտէ շինել այն ամէն բան զոր կը պահանջէ ռանգիրայի և «բանակազ»ի արհեստը:

Կը զգամ շնորհակալութիւններս յայտնել մեր տղոց կըրթութեան մէջ սկաուտական զարգացման այս բան յաջող կիրարկման համար, Մանաւորաբար ինձի հաճոյք պատճառեց լսելը թէ մեր սկաուտները լաւ զգացումներ կը տանին իրենց անզիւացի եղբայրներուն եւ իմ անմիտ հանգէպ եւ կը յուսամ որ յանձն պիտի առնէք անոնց տեղեկացնելու թէ ո՞րքան կը հետաքրքրուիմ անոնց յառաջդիմութիւններովը եւ թէ որքան ուրախ եմ ընելով որ քաղաքաբար կարճ ժամանակուան մը մէջ այնչափ լաւ գործ մը կատարած են:

Վերջերս Պարիստիմէն, Եգիպտոսէն և Լիզիաստանէն վերադարձայ եւ շատ կ'փափայէի որ ժամանակ ունենայի եւ Պոլիսն ալ այցելէի. Պարիստիմի մէջ իբր «յրատար» հայ սկաուտ մը ունենալու քաղաքաբարութիւնը ունեցայ եւ եթէ ան մեր տղոց տիպարը կը ներկայացընէր, այն ատեն մեր տղարը շատ բարձր կարգի սկաուտներ ըլլալու են - եւ նոյն ատեն զուարթերիս - ուրով հետեւ այս տղան միշտ եռանդով կ'աշխատէր ու միշտ կը ժպտէր ու աւելին ընելու պատրաստ էր, հակառակ որ պատերազմի միջոցին իր պարագաներուն կորուստը զինքը բաւական տառապեցուցած էր եւ ինչն ալ իր հարեւաններու խումբի մը կոյմէ հրացանագարի ըլլալու սարսափէն հազիւ ազատած էր, քաղաքազրարս վիրաւորուելէ վերջ մեռած կարծուած էր:

Լաճեցէ՛ք մեր սկաուտներուն հաղորդիլ կաթոգին իղծիրս:

Մնամ Ձերդ
ՊԷՏՐԷ ԲԱՌԻԸԼԷ

ՄԵՐ ՊՈՏՏՐՈՒԱՆԸ ՎԵՐԻ ՆՍՄԱԿԻՆ

30 Յունիս 1921

Յարգելի Սկաուտ պետ

S. R. BADEN-POWELL

Մեր ընկերներէն Պ. Խորասանձեանի անձնական նամակէն, Լայ Սկաուտական Միութիւնս մեծ հաճոյքով տեղեկացաւ Ձեր համակրալի տողերը՝ հայ սկաուտներու մասին. Միութիւնս ջանք չբիմայի որ մեր սկզբունքները աւելի լայն չափով տարածելու հայ պատանիներու մէջ եւ կը յուսայ որ պիտի յաջողի իր նպատակին մէջ:

Միութիւնս շատ կը փափագի յարաբերութեան մէջ գտնուիլ Ձեզ, Ձեր սկաուտներու եւ միւս ազգերու սկաուտական կիցըններուն հետ. Կը յուսանք բարի պիտի ըլլաք երբեմն մեզ պատուելի մեր նամակով:

Անցած տարուան Jamboreeի համար allium մը եւ մեր «Լայ Սկաուտ» թերթէն դրկած է ինք Ձեզ. որ դժբաղդաբար չէր ստացած՝ բոսթի անկանոնութեան պատճառով. Այս անգամ կրկին մաս մը կը դրկեմք Ձեզ նոյն թերթերէն եւ նկայներէն:

Ընդունեցէ՛ք մեր սկաուտական բարեկէրք:
Լայ Սկաուտական Միութեան
Պատասխանատու-բարտուղար
(Ստրագրոչքիւն)



ԱՐՁԱԳԱՆԳ ՃԷՄՈՐԻԻ



(Շարունակութիւն թիւ 26և եւ վերջ)

Իր միութիւնն է վեց ընկերներու խմբակ մը՝ որուն կը հրամայէ իրենց պեօը, իր ընկերներէն մէկը: Ահա՛, իրեն համար կազմուած, բնական խումբը, որ կրնայ ըլլալ բարերար կամ վնասակար: Ահա՛, անհատին համար, անձնագրայումի և պատասխանատուութեան առիթը: Ահա՛ արուեստակցական ողին կազմուած՝ խմբակին պատուոյն համար, այնքան ուժեղ՝ որքան քննէ և է դպրոցի մը տեղական ողին:

Օտար ազգերու համար, սկաուտներուն գաւազանները աւելի կոթեր են, բայց սկաուտին համար, բոլորովին տարբեր բան մը կը ներկայացունեն անոնք: Իր գաւազանը, իր սեփական totemովը (անասունի պատկերովը) և իր մասնաւոր նշաններովը զարդարուած, առանձնայատուկ դրոշմ մըն է. իր գաւազանին նման, սկաուտը բազմութեան մէջ, անհատականութիւն մըն է որ ունի իր առանձնայատուկ գիծերը, իր առանձնայատուկ կարողութիւնները: Հօտին մաս կը կազմէ բայց իր յատուկ էակութիւնը (entity) ունի: Կեանքին ուրախութիւնները ճանչնալ կը սորվի՝ բացօթեայ կեանքին միջոցաւ:

Կայ նաև իմացական կողմը:

Տակաւ տողործելով ընութեան գիտութեամբը, փխզոն հոգին կը մեծնայ և իր շուրջ կը դիտէ: Բացօթեայ կեանքը գերազանց զբոսորդն է, այն դպրոցը որ թող կուտայ դիտել և հասկնալ հրաշալի տիեզերքին հրաշալիքը:

Աշխարհին բոլոր տարրերը (նիւթական, հոգեկան, առեւտրական, քաղաքական, արհեստական, մարդասիրական), պատերազմին եռուզեռ հայոցին մէջ նետուած են: Ինչ դուրս պիտի գայ հոնկէ՝ երբ եռուզեռը դադարի: Ո՞վ կարող է ըսել:

Եթէ առաջ գալիք խառնուրդը անարժէք նիւթ մը ըլլայ, այն ատեն իրա՛ւ պատերազմը սղբերգութիւն մը եղած պիտի ըլլայ: Մեր գաւազանները, մեր ցեղին լաւագոյն արիւնը և մեր հարստութիւնները ընդունայն վատնուած պիտի ըլլան:

Եթէ, ընդհակառակը, մեծ ազգերուն ձուլումը, շատ տարածուած և շատ վսեմ իտէալ, կարենայ կատարուիլ պատշաճ եղանակաւ, անպիտի կրնայ արտադրել զուտ մետաղ մը՝ որուն շնորհիւ կարելի պիտի ըլլայ աշխարհի աշխատութիւնը կազմակերպել մինչեւ հիմա գործադրուած ծրագրէն աւելի ազնիւ ծրագրով մը:

(Շարունակելի)

ՊԵՏԵՆ ԲԱՍՒՐԷՆ
ԲԱՐՈՎ. Յ. Թ. Է.

Մովային սկաուտները ազատագրութեան և այլ փորձեր կատարեցին, օգտագործելով այն նաւը որ pistեին ձախ կողմը կը գտնուէր:

Roversները կատակախաղ մը ներկայացուցին, ցոյց տալով սկաուտիզմի անցեալը և ծրնունդը:

Displys մը կը ներկայացնէր տեսարանի վերայ գտնուող խրճիթի հրդեհը, ցոյց տալով հրդեհի դէմ օգնութեան, մաքառումի և ազատագրութեան փորձերը:

Նուագախումբերու մրցումները շատ յաջող անցան, ինչպէս նաև երգերունը: Ամերիկեան նուագախումբը ամենաշատ ծափահարուեցաւ, նոյնպէս Սկովաիական cornemuseները (տիկկ նուագ) և լոնտօնական 600 սկաուտներու ինքնատիպ օրիւսքը:

Յարակից մասեր. — Օլիմպիայի յարակից մասերուն մէջ կը գտնուէին զանազան ցուցահանդէսներ: Սկաուտներու աշխատութեանց expositionներ երկաթեղէն, փայտեղէն, ոսկեղէն եւ այլն:

Յարկարածիւններ. Կօչկակարներու, դերձակներու, խոհարարներու, կահագործներու եւ այլն, միշտ գործունէութեան մէջ էին:

Իւրաքանչիւր երկրի համար յարկարածին մը յատկացուած էր. զոր կը կազմակերպէին և զարդարէին ամէն երկրի սկաուտները իրենց սովորութեան համաձայն:

Հողակոյտի մը վրայ «Traking Grond» մը հաստատուած էր, որուն վրայ ամէն օր հետք մը կը գծուէր. զոր սկաուտները կը լուծէին:

Յարկարածին մը յատկացուած էր խումբի մէտայներու համար:

Ուրիշ մը կը պարունակէր Daily-Scoutը, անկաօտի օրաթերթը, որ բոլոր սկաուտներու կողմէ կը տպուէր:

Յետոյ կուգար «Zoo»-ն, խումբերուն կողմէ բերուած կենդանիներու ցուցահանդէսը: Նշանաւոր էին փիղ մը, Հարաւային Ափրիկէէ, առիւծի ձագ մը, Չայնամներ, անգլիական փոքրահասակ ձիեր, չնագայլ մը, ուղտ մը, ճերմակ մուկ մը, կապիկներ և թռչուններ:

Ուրիշ մասի մը մէջ զետեղուած էր նաև հանքահոր մը, ուր հանդիսականները կը տես-



Գարակեօզեան Որբանոցի սկաուտները կերակուր պատրաստութեան ատեն

նէին հանքի աշխատանքը և արտածումը: Վերջը տեղի ունեցաւ բանուորներու ազատագրութիւնը:

Արշաւներ — Լօնտօնի մէջ արշաւները կազմակերպուեցան վայրկենական՝ օդօպիւսներով, Գրիսթաշ Բաշասի մէջ, Windsorի և Westminsterի Tour de Londresի, ծովային, գիտական և արհեստական միւզէնորուն և կենդանաբանական պարտէզներու մէջ եւայլն:

Կառավարութեան կողմէ Ալլհամպրայի մէջ ներկայացումն մը տրուեցաւ: Միեւնոյն ատեն տեղի ունեցաւ Ernest Shackletonի կողմէ դասախօսութիւն մը հարաւային բեւեռի մասին՝ սինէմայի ներկայացումով մը:

Մեծ արարողութիւն. — Օգոստ. 1ին պատարագ մը կատարուեցաւ Օլիմպիայի մեծ սրահին մէջ և Եօրքի Արքեպիսկոպոսը քարոզ մը խօսեցաւ:

Վերջին հաւաքումը տեղի ունեցաւ Ուրբաթ 6 օգոստոսին:

Ներկայացումներէ յետոյ, սկաուտները հաւաքուեցան մրցարանի մէջ Սկաուտ՝ Պետի (Պէտրն Բաուրը) շուրջ, որը պատուիրակներու պետերուն բաժնեց սկաուտական մետայլներ՝ և իւրաքանչիւրին մէկ մէկ դրօշակ: Ան ճարտի ճանապարհի քանի մը խօսքեր արտասանեց:

յետոյ մեռեալներու համար յարգանք մը կատարուեցաւ:

Ամէնէն վերջը նուագախումբը սկսաւ երգել ժողովրդական «Auld lough Syne» մնաք բարովի երգը, որ ամբողջ ժողովուրդը յուզեց: Խանդավառութիւնը կատարեալ էր: Սկաուտներ և հանդիսականներ կը կազմէին մեծ շրջանակներ Պէյտրն Բաուրը ուսերուն վրայ բարձրացնելու համար, ան խուսափեցաւ՝ իջնալով «Թագաւորական Ատենան»ը:

Այն ատեն պատուիրակութիւնները հեռացան քիչ առ քիչ, ձեւնպօրին վերջացած էր:

Օգոստ. 10ին Թագաւորը Թագուհին Եօրք դուքսը (իրենց տղան) և Մէրի իշխանուհին (իրենց աղջիկը), Սկաուտ պետի ներկայութեամբ, Պըքենկամի պալատին մէջ Բրիտանական երկիրներու սկաուտները աչքէ անցուցին:

Հնդկական պատուիրակութիւնը իր ճամբորդութեան միջոցին ուշացած ըլլալով հասաւ 16 օգոստոսին «Մօրէա» նաւով:

Որոշուեցաւ Լօնտօնի մէջ նոր սկաուտական կեդրոն մը հաստատել:

Սկաուտական պետերու միջազգային հաւաքում մը տեղի պիտի ունենայ իւրաքանչիւր երկու տարին անգամ մը: Առաջինը տեղի պիտի ունենայ Բարիլի մէջ 1922ին:

Ճիւղորդի մանակոցը Ամերիկեան սկուսաներ, Ֆրանսայի մէջ կարճ հանգիստէ մը յետոյ, Ամերիկա վերադառնալէ առաջ այցելեցին Պելճիքական քանի մը քաղաքներ և պատերազմի դաշտեր. Երանայրիի գաշտին մէջ մեծ խնջոյք մը սարքեցին, որ կրկնեցին իրենց՝ Անկարիի և Բարիդի մէջ կատարած ցոյցելը:

Քարգմ. Գ. Պ. ՈՒՆԱՊԻՆԱՆ



ԳՈՂԸ

(Սկսուածական կեանք)

(Շարունակութիւն թիւ 26-ն եւ վերջ)

Երկու օրէ ի վեր շատ անսովորակ բաներ ունեցած էի, բայց երբեք հասեցի. Լաւագոյն տրամադրութիւններով սպասեցի այդ անսովորակները չյազաղեցաւ. Բիշ վերջը քովի սրահին մէջ ոտնաձանքեր և կարակ խօսակցութիւններ լսեցի. Դռան բանալիին ծակէն դիտելով անոսայ թէ ոտական զինուորները շքազարդած են շեք հագուած պարոն մը և ոտական զինուորներէն մին սեզանին վրայ կը լեցնէր թանկագին գոհարեղէններ, պատեղով միանգամայն թէ ինչպէս դատած էր դանտը. Մեծ զարմանքով իմացայ թէ լաւագոյն ցուցմունքները և վկայութիւնները Բիէրոի կողմէ եղած էին:

Ինչպէր մասամբ կուտայն էի, երբ հարցապնդումը վերջացած, մարդը բանտ առաջնորդեցին եւ ոտականապետը Բիէրոյն ձեռքէն բռնած սենեակէս ներս մտաւ ու ըսաւ.

— Ահա, Պարոն, ճշմարիտ սկսուած մը որ պատիւ կը բերէ 26-ը. կրնաք ինչպէս ճիշդ հարատ ու երջանիկ դաւալ:

26-ի կրնար սակայն, Բիէրոի ընթացքի մասին առանց դիտողութեան անցնել, որով իրեն այսպէս խօսեցայ.

— Բիէրո՛, միթէ ներքին է, առանց արտօնութեան հեռանալ լաւ մըն մթաթեան մէջ, ինչպէս գողը կը փոխի գիշեր ժամանակ, Դաւ պարտաւոր էիր ամէն բան ինձ իմացնել ու տպա ոտականապետուն գալ. Այս ընթացքը ճշմարիտ սկսուած մը երբեք վայել չէ:

Ինչո՞ւ տղան ամթէն կարծեցաւ, բայց ոտականապետը ամիջպէս սկսաւ զայն պաշտպանել.

— Պէտք չէ այս տղան յանդիմանել. Փոքրիկն Բիէրո Ոտականապետեան մեծ ծառայութիւն մը ըրաւ ցոյց տալով շատ նշանաւոր և երկար ատենէ ի վեր հեղինակները փառաւորած դուրսութեան մը հետքը:

Ի՞նչոք, Բիէրոի ուղղելով ըսի «Բիէրո, խնդրեմ, դու ինձ բացատրէ եղբուրս ինչո՞ւ»:

Զարմանք կարմրած, գրպանէն լրագրի կտոր մը հանելով այսպէս պատմեց. «Ի՞նչ քանի շաբաթ առաջ, լրագրիներու մէջ կարգացի կարեւոր գողութիւն մը,

Մանրամասնօրէն կը բացատրէին դողալած գոհարեղէններու տեսակները ու ձեւերը, որոնց մէջ խիստ տարօրինակութիւններ կը գտնուէին. Կոց ստիւքայ այդ ցուցակը, երբ լսին մէջ փնտռեցինք մասանին եւ գտայ զայն, մտածեցի թէ անոր ձեւը խիստ կը նմանէր գողցուած գոհարեղէններուն ձեւին կարծեցի թէ անոնցմէ մին է որով մէկուն բան մը չ'ըսի. Փափաքեցայ ձեզմէ խորհուրդ հարցնել, բայց թերեւս ծաղրելի դառնայի. Որոշեցի ոտականապետը գտնել ու անոր ցոյց տալ. Որոշումս կատարեցի. Երբ ոտականապետին ցոյց տուի, անմիջպէս ձանչցաւ, Ոտական զինուորներ զրկեց Պանդակ ուր ձեռքակալեցին Պարոնը զոր մեքէք երէկ տեսանք. Ինչպէր պարզուած էր. Անկարելի էր Բիէրոն յանդիմանել. Ինչպէս ինչպէս հարատ ու երջանիկ դպացի ու շնորհաւորեցի իր այս բարի գործը, իրեն դիտել տուի սակայն թէ յաճախ, առանց մէկէն խորհուրդ հարցնելու, այսպիսի ընթացքի մէջ գտնուողները իրենց բարեկամներուն այսին կապ ո՞ճելի կը նկատուին, բան մը որ ոչ հասեցի է ու ոչ ալ յանձնարարելի:

Քարգմ. Ե.

DON LEONARDO PEYTON



Օրերի սկսուած եղբայրիկս

Գ. 2. Թ.

Բերայի մասնամիզ I խումբ

Երեկ իմացայ սկսուած առաջնորդ կարգուիլը. արիկայ զիս բաւական ուրախացուց, սա տեսակետով որ, անոր մէջ ապացոյց մը տեսայ հաստատող թէ՛ շատ չէի սխալած երբ քեզ պարկեշտ եւ սկսուած թեան համար սրտանց աշխատող երիտասարդի մը տեղ դրած էի:

Այս գեղեցիկ առթիւ շնորհաւորութիւններս յայտնելով հանդերձ, պիտի խնդրէի որ ընդունէիր թէ աստիճանի բարձրացումը բու շանքերու վարձատրութիւնը չէ միայն, աւելի միշտը, աշխատութիւնը գնահատուած ըլլալով պետերու կողմէ, անոնք ուզած են անոր սանձանները քիչ մը եւս ընդլայնել, այս գեղեցիկ ձեւին տակ բնականօրէն համար քեզ կարգ մը նոր պարտականութիւններով. կը կարծեմ թէ երջանկութիւնը անոր մէջ պիտի կայանայ արդէն, որով շեռե վստահութիւն չ'արի, պատասխանատուութիւններ ունենալ եւ զանոնք զուլս հանել, շնորհներ են որ դժբախտաբար շատ մարդիկ չեն վայելիր:

Պիտի փափագէի որ միշտ յարատեւելով սկսուած կան պարտականութիւններու մէջ աւելցնելով անոնց վրայ առաջնորդի հոգեք եւ պարտաւորութիւններ, տանիս զանոնք սկսուած կան զուարթ ոգիով եւ զուովնակութեամբ:

Ինձ համար թերեւս աւելի զիւրին եւ վայելուչ ըլլար բերանացի յայտնել քեզ շնորհաւորութիւններս, սակայն, առանց խորհուրդ տուողի հոգեք աւանելու, պիտի մաղթէի որ այս բանի մը տողերուն պարունակութիւնը լաւ տպաւորուէր միտքիդ մէջ. «Les paroles s'envolent, les écrits restent», կ'ըսէ ֆրանսական առածը. եւ արդէն գրութիւնս աւելի եզրայրական դարձնելու, եւ անոր իմաստը աւելի հասկատ արձանագրելու համար ստիպ մէջ, զայն կը պատկերազարդեմ պզտիկ յիշատակով մը յաղուած բու սկսուած կեանքիդ. Սրտանց մաղթանքներ կր'ընելով շնորհաւորութիւններուս հետ մեամ՝

Անկեղծ եղբայր սկսուած թեան մէջ

25 Ապրիլ 1921 Կ Պոլս

162



ԲԱՆԱԿՈՒՄ
(CAMPEMENT)

Բանակումի կեանքը դաստիարակիչ արժէք ունեցող շատ բաներ կը ներշնչէ ազոց-բարոյական այս դաստիարակութիւնը չկրնար իր նպատակին հասնիլ՝ վասն զի աղաք քաղաքի և տան ազդեցութիւններէ հեռու են:

Խմբապետներուն ըսելիք շատ բան կայ այս մասին, բայց գոնէ միայն պէտք է ըսուի թէ պէտք է հանգիստ վրանի կեանքով իրենց ճաշակին յարմարած բանակումներով գոհանան: Խմբապետները իրենց ազոց հետ կը վերադրին իրենց փորձառութեան կեանքը, կամ իբրև պատանի իրենց երեւակայած ու ցանկացած կեանքը: Պէտք է փախցնեն լաւագոյն առիթը որ կրնայ տալ մեծ հրապոյր բանակումին եթէ ան՝ զօրաւոր երեւակայութեան տէր ձեռքերէ կը կառավարուի:

Բայց դժւոք, առաջնորդներ, կրնաք ունենալ կարող խմբապետ մը և այնուհանդերձ բանակումը կրնայ ոչինչ արժեք կորսնցնել իր գեղեցկութիւնը եթէ ձեր պիտերուն հանդէպ հաւատարմութիւն չ'ունիք: Բոլորդ ալ մտայնէք իրարու և խորհեցէ՛ք՝ թէ ինչու առաջնորդ եղած էք. անշուշտ թէ այդ աստիճանը իբրև ցուցադրուելիք վարձատրութիւն մը չ'է տրուած ձեզի, այլ ան կը նշանակէ մասնաւոր պարտականութիւն մը որ պէտք է կատարուի, իբրև

առաջնորդ ընելիք բաներ կան և պէտք է՝ որ այդ բաները ընէք, և այն ատեն խմբապետին ձեր վրայ ունեցած վստահութիւնը պարագր պիտի չ'երթայ: Երբ սկսուածները տեսնեն թէ գործերնիդ միշտ լրացած ու լաւ կատարուած է, պիտի խորհին թէ իրապէս արժանի էք առաջնորդ եղած ըլլալու: Զգացուցէ՛ք ձեր ազոց թէ ձեզի հնազանդիլ շատ դժուար է: Զգացուցէ՛ք մանաւանդ թէ երբ խմբապետէն հրաման մը ստանաք, բոլոր խմբակը պատրաստ է զայն իսկոյն և մեծ եռանդով կատարելու:

Բանակումը մէկ կամ երկու վտանգ ունի որոնցմէ սակայն շատ դիւրաւ կ'զգուշանայ խելացի բանակողը: Բանակումը երբ կատարուի պէտք եղածին պէս անգին օգուտներ ունի որոնցմէ պէտք է գիտնալ օգտուիլ: Բանակումի գլխաւոր օգուտներն են.

Բարոյականի զարգացում և կարգապահութիւն,

- Առողջութիւն,
- Խնայողութիւն,
- Հնարասութիւն, ներշնչում,
- Առաջնորդելու փորձառութիւն,
- Woodcraftի (անասառագիտութիւն) ծանօթութեանց ընդարձակում:
- Կարելի է թէ գոնուի սկսուած մը որ բա-